# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2019/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «13» սեպտեմբերի 2019թ.

2019թ-ի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 10:40, ՀՀ, ք. Երևան, Բյուզանդի 1/3 հասցեում՝ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի գրասենյակում, տեղի ունեցավ **ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2019/3** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

| | |
|---|---|
| Ա. Ասատրյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի տեխնկական բաժնի պատասխանատու (հանձնաժողովի նախագահ). |
| Ա. Ալեքյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի ավագ տեխնիկական մասնագետ. |
| Ա. Կարապետյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի տրանսպորտային միջոցների շահագործման պատասխանատու. |
| Կ. Մկրտչյան | «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ ներկայացուցիչ (հանձնաժողովի քարտուղար): |

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Ասատրյանը, իսկ քարտուղարն էր՝ Կ. Մկրտչյանը:

### ՕՐԱԿԱՐԳ

1. ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2019/3 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2019/3 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

## 1.ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2019/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Կ. Մկրտչյանը՝ հայտնելով, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2019/3 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը քարտուղարի կողմից ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2019/3 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Հաստատել ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2019/3 ծածկագրով գնմանն ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) **«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ**՝ բավարար.

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

## 2. ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2019/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2019/3 ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին** չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել **«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ**-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Կ. Մկրտչյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3

Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ասատրյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ալեքյան

Ա.Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Կ. Մկրտչյան